# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19/09/14

ք.Երևան

25-ը սեպտեմբերի 2019թ.

**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

**«ԷյՋի Պրինտ Իքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ.Կարապետյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված բոլոր տպագրական ծառայությունները և տպագրված նյութերը տեղադրել Պատվիրատուի կողմից նշված վայրում (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Կողմերն արձանագրում են, որ տպագրության ենթակա նյութերը որոշում և Կատարողին է տրամադրում Պատվիրատուն: Կատարողն իրավասու չէ տրամադրված նյութերում կատարելու որևէ փոփոխություն կամ լրացում՝ հարմարեցնելով դրանք իր տեխնիկական հնարավորություններին կամ այլ պահանջներին: Այն դեպքում, երբ Կատարողը գտնի, որ այդպիսի փոփոխություններն անհրաժեշտ են Պատվիրատուին առավելագույն արդյունք ապահովելու համար, դրանք մինչև տպագրությունը գրավոր կհամաձայնեցնի Պատվիրատուի հետ:

1.3. Ծառայությունները մատուցվում են մինչև 2019թ.-ի հոկտեմբերի 04-ը ներառյալ:

1.4. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետում,

2.1.2. Ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, պահանջել Կատարողից տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն,

2.1.3. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.1.1. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս,

2.1.2. Պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել Ծառայությունների մատուցման կապակցությամբ Պատվիրատուին պատճառված վնասը՝ ներառյալ բաց թողնված օգուտը,

2.1.3. Միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը և Կատարողից պահանջել հատուցել Պատվիրատուին պատճառված վնասն ամբողջությամբ՝ ներառյալ բաց թողնված օգուտը, եթե՝

i. Կատարողը խախտել է սույն Պայմանագրի Հավելված 1-ով Ծառայությունների համար սահմանված բնութագրերը և ողջամիտ ժամկետում իր հաշվին չի շտկել նշված թերությունը կամ խախտման բնույթից ակնհայտ է, որ այն չի կարող շտկվել ողջամիտ ժամկետում,

ii. Կատարողը Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում չի մատուցել Ծառայությունները կամ դրա մասը,

iii. Կատարողն այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Սույն Պայմանագրի կատարման համար Կատարողին ողջամիտ ժամկետում տրամադրել տպագրության ենթակա նյութերը և անհրաժեշտ տեղեկատվությունը,

2.2.2. Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ լինելու դեպքում Կատարողի ներկայացուցիչներին տրամադրել Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն,

2.2.3. Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին,

2.2.4. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

2.3. **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել տրամադրել սույն Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ նյութերը և տեղեկատվությունը,

2.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել մատուցված Ծառայությունների դիմաց սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

2.4. **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ,

2.4.2. Ծառայությունները մատուցել սույն Պայմանագրով սահմանված ժամկետում և պատշաճ որակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխան,

2.4.3. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, սույն Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն,

2.4.4. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումներին,

2.4.5. Վերացնել Ծառայությունների մատուցման արդյունքում հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները՝ Պատվիրատուի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելուց երկօրյա ժամկետում,

2.4.6. Հանձնման-ընդունման ակտի ստորագրման հետ մեկտեղ Պատվիրատուին տեղեկացնել Ծառայությունների արդյունքի շահագործման պահանջների և կանոնների, այդ պահանջները և կանոնները չպահպանելու հետևանքների վերաբերյալ, եթե դա կիրառելի է Ծառայությունների բնույթից ելնելով,

2.4.7. Տպագրված նյութերը տեղադրել ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 հասցեում գտնվող Պատվիրատուին պատկանող շենքերում՝ Պատվիրատուին մատնանշած վայրերում:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների արժեքը կազմում է 565 000 (հինգ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ: Ծառայությունների արժեքը ներառում է բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ Պատվիրատուի կողմից ներկայացված նյութերի տպագրության, տպագրված

նյութերի տեղափոխման, Պատվիրատուի մատնանշած տարածքներում դրանց տեղադրման և այլ ծախսերը:

3.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի երկկողմանի հաստատվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.5. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը:

4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում է հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը:

4.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ և/կամ շեղումներ, Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնել հանձնման-ընդունման ակտի չհաստատման հիմնավորում՝ նշելով հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ:

4.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Պատվիրատուին ներկայացնելու ամսաթվով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ժամկետի խախտման դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար սույն Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.4. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու սույն Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար սույն Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.5. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

## 6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրվեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում՝ մինչև Կողմերի համար դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

8.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

8.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.5. Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.6. Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

8.7. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.8. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել սույն Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.9. Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով

գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.10. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.11. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ** | **«ԷյՋի Պրինտ Իքս» ՍՊԸ** |
| Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26<br>ՀՎՀՀ՝ 01540062<br>«Արդշինբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ՝ 2470102796740000 | Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 11<br>ՀՎՀՀ՝ 00481587<br>«Էվոկաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ՝ 1660009379600100 |
| **Մ.Գրիգորյան**<br>*Գործադիր տնօրեն* | **Վ.Կարապետյան**<br>*Տնօրեն* |

***Հավելված 1***
*2019թ.-ի սեպտեմբերի 25-ին կնքված*
*N 19/09/14 պայմանագրի*

## ՏՊԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ

| Հ/Հ | Անվանումը | Բնութագիրը | Չափման միավոր | Քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 160 սմ տրամագծով | հատ | 1 |
| 2 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 275 սմ տրամագծով | հատ | 2 |
| 3 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 90 սմ տրամագծով | հատ | 2 |
| 4 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 80 սմ տրամագծով | հատ | 1 |
| 5 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 150X75 սմ չափերի | հատ | 2 |
| 6 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 120X265 չափերի | հատ | 1 |
| 7 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 36 X 360 սմ չափերի | հատ | 1 |
| 8 | Տպագրություն 5 մմ հաստությամբ ՊՎԽ-ի վրա | 85 X 520 սմ չափերի | հատ | 1 |

## ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատվիրատու**

**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

**Մ.Գրիգորյան**
*Գործադիր տնօրեն*

**Կատարող**

**«Էյ Ջի Պրինտ Իքս» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 11
ՀՎՀՀ՝ 00481587
«Էյմանբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660009379600100

**Վ.Կարապետյան**
*Տնօրեն*